

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ----- 2020թ.

N ---- -Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆԻ «ԱՐԱԲԿԻՐ ՆԱԽԱԳԻԾ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 27-րդ հոդվածով և 67-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լուծարել Երևանի «Արաբկիր նախագիծ» փակ բաժնետիրական ընկերությունը (գտնվելու վայրը՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Ն. Զարյան 27, պետական գրանցման համարը՝ 264.120.08638):

2. Արաբկիր վարչական շրջանի ղեկավարին սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 7-օրյա ժամկետում ստեղծել լուծարման հանձնաժողով:

3. Լուծարման հանձնաժողովին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում ավարտել Երևանի «Արաբկիր նախագիծ» փակ բաժնետիրական ընկերության լուծարման գործընթացը և 20-օրյա ժամկետում լուծարումից հետո մնացած գույքը հանձնել «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի տնօրինությանը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆԻ «ԱՐԱՐԵԼԻՐ ՆԱԽԱԳԻԾ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևանի «Արաբկիր նախագիծ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) միակ բաժնետերը հանդիսանում է Երևան համայնքը, որին 100%-ով պատկանում են Ընկերության բաժնետոմսերը, իսկ Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի մարտի 15-ի N193-Ն որոշմամբ՝ կառավարման լիազորությունները պատվիրակված են Երևանի Արաբկիր վարչական շրջանի ղեկավարին: Ընկերությունը 2009 թվականի մայիսի 25-ից իրականացնում է նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ:

Ընկերությանը քաղաքաշինության փաստաթղթերի մշակման համար նախկինում տրամադրված լիցենզիաները սույն թվականի հունվարի 1-ից դադարել են գործել, որի արդյունքում 2020 թվականի առաջին եռամսյակում ֆինանսատնտեսական գործունեություն չի ծավալվել՝ Ընկերությունը չի մասնակցել գնումների մրցույթներին, և չի ապահովել ֆինանսական եկամուտներ, ինչպես նաև չեն վճարվել աշխատակիցների առաջին եռամսյակի աշխատավարձերը և դրանց գծով հարկային պարտավորությունները, ինչը 01.07.2020թ. դրությամբ կազմում է 1768.0 հազ.դրամ: Ընկերության հաստիքացուցակով նախատեսված են 9 միավոր աշխատակիցներ, որից 4-ը՝ վարչական, իսկ 5 միավոր մասնագետների ամսական աշխատավարձի ֆոնդը կազմում է՝ 1089.4 հազար դրամ: Փաստացի աշխատում են 2-ը՝ տնօրենը և հաշվապահը:

Ընկերությունը վերջին երեք տարվա ընթացքում չի ապահովել բավարար ֆինանսական ցուցանիշներ, այսպես. 2017 թվականին գործունեությունից ստացված վնասը կազմել է 1126.5 հազար դրամ, 2018 թվականի տարեկան արդյունքը զրոյական էր, իսկ 2019թ. շահույթը կազմել է 532.8 հազ. դրամ: 2020 թվականի առաջին կիսամյակի գործունեության ֆինանսական արդյունքներով վնասը կազմել է 1586.3 հազ. դրամ, և Ընկերության հետագա գործունեությունը դառնում է ոչ նպատակահարմար:

Հաշվի առնելով, որ սկսած 2018թ.-ից Ընկերության սեփական կապիտալը բացասական է (2017թ. տարեկան արդյունքներով կազմել է «-693.0» հազ.դրամ), և համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 3-րդ կետի՝ եթե երկրորդ և յուրաքանչյուր հաջորդ ֆինանսական տարվա ավարտից հետո պարզվի, որ Ընկերության գուտ ակտիվների արժեքը պակաս է օրենքով սահմանված կանոնադրական կապիտալի նվազագույն չափից, ապա Ընկերությունը պարտավոր է ընդունել որոշում լուծարման մասին, ուստի՝ անհրաժեշտություն է առաջացել նշված նախագծի ընդունման:

Ելնելով վերոգրյալից՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում «Երևանի «Արաբկիր նախագիծ» փակ բաժնետիրական ընկերությունը լուծարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆԻ «ԱՐԱՐԿԻՐ ՆԱԽԱԳԻԾ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՍ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևանի «Արաբկիր նախագիծ» փակ բաժնետիրական ընկերությունը լուծարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չկա:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆԻ «ԱՐԱՐԿԻՐ ՆԱԽԱԳԻԾ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՍՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևանի «Արաբկիր նախագիծ» փակ բաժնետիրական ընկերությունը լուծարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ